Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
Ընդհանուր նկարագրությունը	Բակալավրի կրթական աստիճանում <<Ընդհանուր կառուցամասի>> աշխատատարությունը կազմում է մասնագետի պատրաստմանն անհրաժեշտ ընդհանուր ժամաքանակի 20%-ը, հատկացվող կրեդիտային միավորները՝ 48: Ելնելով մասնագիտական առանձնահատկություններից և դրանց ներկայացվող պահանջներից, այս կրթամասի 4.2% հատկացվել է կամընտրական առարկաներին՝ 2 կրեդիտային միավորով: «Ընդհանուր մասնագիտական կառուցամասի>> ընդհանուր աշխատատարությունը կազմում է 35.8%-ը, իսկ հատկացվող կրեդիտային միավորները՝ 86: Ելնելով մասնագետին ներկայացվող որակավորման պահանջներից՝ տվյալ կրթամասի 4.7%-ը հատկացվել է կամընտրական առարկաներին՝ 4 կրեդիտ: «Հատուկ մասնագիտական կառուցամասի» ընդհանուր աշխատատարությունը կազմում է 44.2%-ը, իսկ հատկացվող կրեդիտային միավորները՝ 106: Այս կառուցամասում մանկավարժական և մասնագիտական պրակտիկաներից յուրաքանչյուրին հատկացվել է 12–ական կրեդիտ: Իսկ ավարտական աշխատանքի կատարմանը հատկացվել է 10 կրեդիտ՝ առաջին կիսամյակում՝ 4 և 2-րդ կիսամյակում՝ 6 կրեդիտ: • Կրթական ծրագրի սահմանված տևողությունը 4 տարի է՝ 8 կիսամյակ, յուրաքանչյուր կիսամյակ՝ 16 շաբաթ լսարանային և 4 շաբաթ՝ քննաշրջան: Կրթական ծրագիրն ավարտվում է ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությամբ, որի նպատակն է տեսական, գործնական, հետազոտական, մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը՝ ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2024/08/բակ-ՖԴՍՄ-առկա.pdf
Շնորհվող աստիճանը	Մանկավարժության բակալավր
ՈԱՇ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
Կրեդիտները	240
Ուսուցման ձևը	Առկա

Ծրագրի տևողությունը	4 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	450 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1 Նկարագրել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հիմնախնդիրները, հայեցակարգերը, հիմնական հասկացությունները, սկզբունքները, ժամանակակից մեթոդները, միջոցները և ոլորտում գործող իրավական փաստաթղթերը: Ա.2 Ներկայացնել ուսումնամարզական գործընթացի ազդեցությունը օրգանիզմի վրա, նշել հնարավոր վնասվածքների տեսակները, առաջացման պատճառները և առաջին բուժօգնության կանոնները, ինչպես նաև առողջ ապրելակերպի բաղադրիչները: Ա.3.Նկարագրել անձի հոգեբանամանկավարժական և անատոմիաֆիզիոլոգիական բնութագրերը, տարիքային և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները և շարժողական ընդունակությունների մշակման օրինաչափությունները, ինչպես նաև դրանց վերահսկման մեխանիզմները: Ա4. Բացատրել անհատական ուսուցման պլանի /ԱՈՒՊ/ կառուցվածքը, նպատակը, ուսումնամարզական աշխատանքների պլանավորման, հաշվառման, վերահսկման և իրականացման առանձնահատկությունները: Ա.5 Բացատրել ֆիզիկական վարժությունների տեխնիկայի կատարման առանձնահատկությունները, դրանց ուսուցման և կատարելագործման մեթոդաբանությունը, կենսամեխանիկական և կենսաքիմիական օրինաչափություններն ու օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական փոփոխությունները: Ա.6 Բնութագրել հետազոտական աշխատանքներին ներկայացվող պահանջները, մեթոդները և միջոցները: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

	Բ.1 Կողմնորոշվել մասնագիտական գործունեության ոլորտում առաջացած անկանխատեսելի իրավիճակներում, վերլուծել ու գնահատել ուսումնամարզական և ֆիզիկական դաստիարակության գործընթացում առաջացած խնդիրները և տալ դրանց լուծման ուղիները: Բ.2 Իրականացնել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում հետազոտություն, որակական և քանակական տվյալների հավաքագրում, մշակում, վերլուծում, գնահատում և ստացված արդյունքները ներդնել ուսումնամարզական ու ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Բ.3 Կազմել անձի ֆիզիկական պատրաստվածության մակարդակին, ֆիզիկական զարգացման և առողջական վիճակի համապատասխան վարժությունների համալիրներ՝ անհրաժեշտ շարժողական ընդունակություններ մշակելու համար: Բ.4 Կազմել ուսումնամարզական և ֆիզիկական դաստիարակության տարբեր օղակներում իրականացվող գործընթացը բարելավող աշխատանքնային պլաններ՝ դասի կոնսպեկտ, մարզման պլան, անհատական ուսուցման պլան, հաշվի առնելով սովորողների առողջական վիճակը, տարիքային և ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, ֆիզիկական պատրաստվածության մակարդակը և հոգեբանամանկավարժական բնութագրերը: Բ.5 Կիրառել ֆիզիկական վարժություններ ուղղված սովորողների ներդաշնակ և համակողմանի ֆիզիկական զարգացմանը, բարոյակամային և հոգեբանական հատկանիշների բարելավմանը և առողջության ամրապնդմանը: Բ.6 Կիրառել հարակից մասնագիտական ոլորտներից ձեռք բերված գիտելիքները ուսումնամարզական և դաստիարակչական գործընթացում՝ դրսևորելով ստեղծարար–նորարար մոտեցումներ : Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ.1 Հաղորդակցվել գրավոր ու բանավոր՝ մայրենի և օտար լեզուներով: Գ.2 Իրականացնել անհատական և թիմային աշխատանք՝ ստանձնելով պատասխանատվություն թիմի յուրաքանչյուր անդամի նկատմամբ և դրսևորել ինքնաքննադատական, ստեղծագործական մոտեցում, պահպանել ընդհանուր և մասնագիտական էթիկայի կանոնները:

	Գ.3 Օգտվել ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներից և գրական աղբյուրներից, պատրաստել զեկույցներ, հաշվետվություններ, շնորհանդեսներ, հոդվածներ՝ պահպանելով ակադեմիական ազնվության չափանիշները: Գ.4 Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները և ինքնուրույն որոշում կայացնել հետագա ուսումնառությունը շարունակելու նպատակով:
Աշխատաշուկան	• մանկատներ, • նախադպրոցական ուսումնական հաստատություններ, • հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ հիմնական և ավագ դպրոցներ, • մարզադպրոցներ՝ մանկապատանեկան, օլիմպիական հերթափոխի մասնագիտացված, • մարզամշակույթային կենտրոններ, մարզական հասարակական կազմակերպություններ, • միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, • ուսումնագիտական լաբորատորիաներ, • գիտամանկաավարժական գիտակրթական կենտրոններ • ուժային կառույցներ՝որպես ֆիզիկական պատրաստության մասնագետ • մարզական ակումբներում և առողջարարական կենտրոններում որպես մեթոդիստ–հրահանգիչ • մարզական ակումբներում և առողջարարական կենտրոններում որպես մեթոդիստ–հրահանգիչ